

Կարեն Հայրապետյան ԱՆԴՐԱՆԻԿԸ ԱՐԵՄՏԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Բանալի բառեր - Անդրանիկ, ազգային-ազատագրական շարժում, ազգային հերոս, առաջնորդ, հասարակական-քաղաքական գործունեություն, արևմտահայ փախստական, Արևմտահայ առաջին համագումար, դաշնակցություն, քաղաքական պայքար, հատվածականություն:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևմտահայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն ղեմքերից է Անդրանիկ Օզանյանը (1856 – 1927թթ.): Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ Անդրանիկը սակավաթիվ այն գործիչներից է, ով հայ ժողովրդի կողմից ոչ միայն ճանաչվել ու հարգվել է, այլև անմնացորդ սիրվել: Համաժողովրդական այդ հարգանքի և սիրո արգասիքն է այն ակներև փաստը, որ նա ժողովրդի կողմից անվերապահորեն ընդունվել ու մեծարվել է որպես ազգային հերոս: Ընդ որում, հատկանշական է, որ Անդրանիկին այդ պատվաբեր կոչմանը ժողովուրդը արժանացրել է նրա կենդանության օրոք, ինչը հայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ եզակի երևույթներից է:

Անկասկած, նմանօրինակ վերաբերմունքով է բացատրվում այն հանգամանքը, որ Անդրանիկին նվիրված պատմագիտական և կենսագրական ուսումնասիրությունների և աշխատությունների հեղինակների մեծ մասը հիմնականում ուշադրությունը սևերում են նրա՝ որպես ազգային-ազատագրական պայքարի մեծապանծ մարտիկի՝ ֆիդայու, հայդուկապետի և կամավորական գնդի հրամանատարի գործունեության վրա: Մի մասն էլ անդրադառնալով Անդրանիկի քաղաքական գործունեությանը՝ խուսանավում են այն ենթարկել համակողմանի և հանգամանալից վերլուծության և արդյունքում՝ ըստ արժանվույն գնահատել նրան որպես արևմտահայ ազգային-քաղաքական գործիչ և առաջնորդ (լիդեր): Այդ նպատակով անդրադարձել ենք Անդրանիկի գործունեության միայն մեկ, բայց շատ տպավորիչ և խոսուն դրվագին՝ կանգ առնելով 1917թ. մայիսի 2-ից 11-ը Երևանում կայացած Արևմտահայ 1-ին համագումարում նրա՝ որպես հակադիր բլոկներից մեկի ղեկավարի դիրքին, գործելակերպին ու քաղաքական պայքարի ձևերին:

1917թ. Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունից հետո Այսրկովկասում ստեղծված քաղաքական նպաստավոր պայմաններում Անդրանիկը շարունակում է եռանդուն և նպատակասլաց ազգային, հասարակական-քաղաքական գործունեությունը: Այդ ժամանակ Մեծ եղեռնը վերապրած և Հարավային ու Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ ժողովրդի արևմտահայ հատվածի մի մասը կազմող արևմտահայ փախստականների, նրանց ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների «հետաքրքարությունն ամփոփված էր Թուրքահայաստանի և գաղթականական գործերի սահմաններում»¹: Հեղափոխության հետագա անկախատեսելի զարգացումների պայմաններում արևմտահայ ղեկավար գործիչները անհրաժեշտություն էին համարում մեկ անգամ ևս անդրադառնալ արևմտահայության հիմնախնդիրներին: Անդրանիկը գտնում էր, որ այդ խնդիրները լուծելու համար առաջնայինը հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերի համախմբումն է արևմտահայ փախստականներին օգնելու գործի շուրջ²:

Արևմտահայ հասարակական-քաղաքական ուժերը փորձում էին վերակազմել իրենց շարքերը և ստեղծել համազգային կուռ կազմակերպություն³: Նրանք ձգտում էին իրենց

¹ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 34:

² Տե՛ս Андраник Озанян, Документы и материалы, «Вестник архивов Армении» («Банбер Аւաստանի արխիւներ»), Երևան, 1991, док. N86, стр. 228.

³ Տե՛ս «Բանվոր», 18 ապրիլի 1917 թ.:

ծեռքը վերցնել արևմտահայ փախստականների և ընդհանուր առմամբ արևմտահայության հետագա ճակատագրի տնօրինումը և ղեկավարումը՝ ձերբազատվելով արևելահայ հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների խնամակալական վերաբերմունքից¹: Այդ վերաբերմունքը առաջ էր բերում արևմտահայ փախստականների, նրանց ղեկավար շրջանակների օրինական դժգոհությունը և բողոքը: Անդրանիկը նշում էր, որ արևմտահայ փախստականների բողոքը այն իրողության արդյունք էր, որ արևմտահայությունը երկու տարվա ընթացքում ձայն չունեցավ փախստականական և պատասխանատու այլ գործերում²: Դաշնակցության, ռամկավարների և հնչակյանների ներկայացուցիչների միջև «երկար» խորհրդակցությունների արդյունքում որոշվում է «համագումար մը հրավիրել Արևմտահայ մտավորականներէ և հանրային այլ գործիչներէ՝ ոչ մեկ խտրություն դնելով կուսակցական այլազան դավանանքներու մեջ», - գրում է Վ. Փափազյանը³: Հատկանշական է, որ Արևմտահայ համագումար հրավիրելու հարցը արևմտահայ ազգային-քաղաքական գործիչների կողմից օրակարգում դրվել է դեռևս 1916 թվականին⁴:

«Բայց պետք էր Անդրանիկն ալ համաձայներ,- նշում է Ա. Դարբինյանը,- փախստականներեն խոշոր զանգված մը կապված էր անոր անվան, առանց անոր համաձայնության՝ կարելի չէր ընդհանուր միություն կազմել»⁵: Ա. Դարբինյանի այդ տեսակետի հետ համաձայնվում է նաև Ա. Մանուկյանը (Արամ): Համագումարին Անդրանիկի մասնակցության մասին նրանց տեսակետը ավելի քան հիմնավորված է եղել: Համագումարին նախորդած մեկ տարվա ընթացքում Անդրանիկը, թողնելով ռազմական գործը և մտնելով Այսրկովկասի հայ ազգային հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտը, գործունե և հետևողական գործունեության արդյունքում հասնում է արևմտահայ ազգային-քաղաքական մի նոր հոսանքի առաջնորդի (լիդերի) բարձր դիրքի:

1916թ. մարտին հայկական կամավորական գնդերի զորացրման և դրանք ռուսական բանակի կազմում կանոնավոր հրաձգային գումարտակների վերակազմակերպման պայմաններում⁶ Անդրանիկը հրաժարական է տալիս և մնում Այսրկովկասում՝ ներգրավվելով այստեղ ծավալվող հայ ազգային հասարակական-քաղաքական գործերում: Անդրանիկի այդպիսի վարմունքը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայկական կամավորական գնդերի լուծարման պարագայում նա չէր կարող մնալ և շարունակել զինվորական ծառայությունը ազգային նկարագրից զրկված ռուսական բանակի գումարտակների կազմում: Ակներև է, որ իր կեցվածքով և խառնվածքով Անդրանիկը չէր կարող անկողմնակալ դիտորդի դերում լինել այն ժամանակ, երբ միջազգային դիվանագիտության օրակարգում դրված էր Արևմտյան Հայաստանի հարցը, իսկ Կովկասում սփռված հազարավոր արևմտահայ փախստականներ մաքառում էին գոյատևման համար: Միաժամանակ, իր առաջամարտիկի և առաջնորդի (լիդերի) ձիրքով Անդրանիկը չէր կարող մնալ երկրորդական դերում:

Մինչև 1917թ. Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը Անդրանիկը ծավալում է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն՝ մասնակցելով մի շարք մարդաշատ հավաքների ու ժողովների⁷: Հայ ժողովրդի ինչպես արևմտահայ, այնպես էլ

¹ Տե՛ս Ա. Թերզիբաշյան, Նուպար, Փարիզ, 1939, էջ 152:

² Տե՛ս Андраник Озанян, Документы и материалы, «Вестник архивов Армении» («Банбер Аճաստանի արխիվներ»), док. N86, стр. 229.

³ Վ. Փափազյան, Իմ հուշերը, Բեյրութ, 1952, էջ 438:

⁴ Տե՛ս Վ. Փափազյան, Իմ հուշերը, էջ 438, նաև Ա. Չելեյան, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Երևան, «Արևիկ», 1990, էջ 375:

⁵ Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Բոստոն, 1979, էջ 346:

⁶ Տե՛ս Андраник Озанян, Документы и материалы, Вестник архивов Армении (Банбер Аճաստանի արխիվներ), Ереван, 1991, док. N77, стр. 220.

⁷ Տե՛ս Ջոր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 50:

արևելահայ հատվածների մի զգալի մասը՝ սիրելով և վստահելով ազգային հերոսին, ցանկանում են հանդիպել նրան, իմանալ հայ ժողովրդի առջև ծառայած ազգային-քաղաքական տարբեր հիմնախնդիրների նկատմամբ նրա վերաբերմունքը: 1916թ. հուլիսին Անդրանիկը շրջագայություն է մեկնում Յուսիսային Կովկասի մի քանի հայաշատ քաղաքներ, հանդիպումներ է ունենում հայ հասարակության ներկայացուցիչների հետ, ծանոթացնում Արևմտյան Հայաստանի ապագայի վերաբերյալ իր տեսակետին, հորդորում է գումարներ հանգանակել արևմտահայ փախստականներին օգնելու համար¹:

Անդրանիկը հետևողական և նպատակասլաց աշխատանք է իրականացնում նաև Կովկասում ապաստանած արևմտահայ փախստականների շրջանում: Արևմտահայ փախստականների օժանդակության կազմակերպման գործը սկզբունքային վերլուծության ենթարկելով՝ Անդրանիկը «Հորիզոն» թերթում հրապարակում է «Իմ խոսքը» խորագրով հոդվածը, որում ներկայացնում է իր մոտեցումները այդ բնագավառում տեղ գտած թերությունների վերացման վերաբերյալ: Խորին շնորհակալություն հայտնելով արևելահայությանը, բարեգործական կազմակերպություններին՝ արևմտահայ փախստականներին պատասպարելու և սատարելու համար՝ Անդրանիկը միաժամանակ առաջարկում է գաղթականական գործի կազմակերպչական աշխատանքներում առաջին հերթին ներգրավել արևմտահայ փախստականների ներկայացուցիչներին²:

Անդրանիկի անմիջական ղեկավարությամբ և մի քանի արևմտահայ մտավորականների մասնակցությամբ 1917թ. հունվարից նախաձեռնում են³ և ապրիլի 16-ին իրականացվում արևմտահայ ոչ կուսակցական պարբերականի՝ «Հայաստանի» հրատարակումը⁴: 1917թ. մարտի 15-ի «Հայաստան» թերթի հրապարակման մասին ազդարարում Անդրանիկը նշում է, որ «ռուսական մեծ յեղաշրջման շնորհիվ կովկասահայ թերթերը գրեթե չեն զբաղիր տաճկահայ փախստականներու հարցով, որովհետև, իրավացիորեն, պետք է իրենց բոլոր ճիգերը ի մի հավաքել ներքին կեանքի կազմակերպութեան, մենք, տաճկահայերս, կարիք զգացինք և անհրաժեշտ տեսանք Թիֆլիսի մեջ հրատարակել տաճկահայ փախստական գործի համար նուիրուած լրագիր մը, որ բացառաբար զբաղի այդ կոտորուած ժողովուրդի կարիքներով»⁵: Անդրանիկի առաջնորդությամբ «Հայաստան» թերթի շուրջ փաստացի ձևավորվում է արևմտահայ նոր ազգային-քաղաքական հոսանք: Հայ ժողովրդին ուղղված նրա դիմումում մատնանշվում է, որ «Հայաստան» թերթի շուրջ միավորված ազգային-քաղաքական գործիչների հիմնական նպատակն է համախմբել հայկական բոլոր հասարակական-քաղաքական ուժերը արևմտահայ փախստականների ֆիզիկական գոյության ապահովման և օժանդակության տրամադրման գործի շուրջ⁶:

Անդրանիկը բարձրաձայնում է այն կարծիքը, որ «կովկասահայ դաշնակցականները պիտի հակառակին Տաճկահայերու որևէ ձեռնարկին, եթե իրենք ղեկավարողի դերին մեջ չգտնվին»⁷: Նա արտահայտում է արևմտահայ ղեկավար շրջանակների այն մասի տեսակետը, որոնք գտնում էին, որ կովկասահայ դաշնակցականները չեն հանդուրժելու արևմտահայ փախստականների հասարակական-քաղաքական ինքնուրույն գործելակերպը: Այդ պատճառով վերը նշված երեք արևմտահայ կուսակցությունների

¹ Տե՛ս Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, «Կախա» հրատ., 1996, էջ. 537-541:

² Տե՛ս «Հորիզոն», 29 հունվարի 1917թ., N21:

³ Տե՛ս Андраник Озанян, Документы и материалы, «Вестник архивов Армении» («Банбер Аւաստանի արխիւներ»), док. NN 79; 80, стр. 222-223.

⁴ Տե՛ս «Հայաստան», Թիֆլիս, 16 ապրիլի 1917թ., N1:

⁵ ՀԱԱ, ֆ. Պ-370, ց. 1, գ. 93, թ. 6:

⁶ Տե՛ս Андраник Озанян, Документы и материалы, «Вестник архивов Армении» («Банбер Аւաստանի արխիւներ»), док. N86, стр. 228.

⁷ Տե՛ս Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 346:

խորհրդակցությունների արդյունքում Անդրանիկին համոզելու գործը իր վրա է վերցնում արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ճանաչված դաշնակցական գործիչ Արամը: Նա կարողանում է Անդրանիկին վստահացնել, «որ կովկասահայ դաշնակցականները փախստականական գործին մեջ երբեք պիտի չուզեն մտնել, թրքահայ դաշնակցականները նույնպես կուզեն անկախ մնալ կովկասահայ դաշնակցականներեն»¹: Անդրանիկը տալիս է իր համաձայնությունը:

Երկու օր անց հրապարակվում է Անդրանիկի, Արամի և Ա. Դարբինյանի ստորագրությամբ հայտարարություն, որը «կոչ կըլլար գրավված վայրերու և Կովկաս ապաստանած 250 000 թրքահայ գաղթականներուն միանալ, ժողով մը գումարել, ընտրել հեղինակավոր մարմին մը, որ իրավունք ունենար գործակցելու կովկասահայ կազմակերպություններուն՝ գաղթականներուն օգնության գործը ավելի կանոնավոր հիմքերու վրա դնելու համար»²: Ինչպես տեսնում ենք, համագումարում պետք է քննության դրվեին լոկ արևմտահայ փախստականական գործի կազմակերպման հետ կապված հարցեր: Փոխադարձ համաձայնությամբ Արևմտյան Հայաստանի խնդիրը մնում է համագումարի օրակարգից դուրս: Ըստ երևույթին, ձեռք է բերվում նաև համաձայնություն՝ համագումարում Մեծ եղեռնի ողբերգական հետևանքների և դրանում մեղավորների խնդրին չանդրադառնալու մասին:

Այդ պայմանավորվածություններով է բացատրվում այն հանգամանքը, որ ազգային-քաղաքական խնդիրների առաջադրման առումով Արևմտահայ 1-ին համագումարը դրսևորում է բավական զուսպ, չափավոր մոտեցումներ: Արևմտահայ 1-ին համագումարը հանդես գալով որպես հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ներկայացուցչական մարմին՝ ձեռնպահ է մնում Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում անկախ Հայաստանի ստեղծման խնդրի առաջադրումից: Այդ հիմնական նպատակի իրագործման ուղղությամբ առաջնահերթությունների հստակեցման, կարճաժամկետ ծրագրերի մշակման ու հասարակությանը ներկայացման խնդիր չի դրվում նաև համագումարի կողմից ձևավորվող արևմտահայ կենտրոնական մարմնի առջև: Արևմտահայ 1-ին համագումարի մասնակիցները պետք է նկատի ունենային, որ վերը նշված հիմնարար նպատակի առաջադրումը կարող է հանգեցնել Ռուսաստանի հեղափոխական նոր իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքին և հնարավոր հակազդեցությանը: Համագումարը գտնելով, որ Հայկական հարցը վստահված է Պողոս Նուբարի ղեկավարությամբ և արևմտահայերի մասնակցությամբ կազմված պատվիրակությանը, սահմանափակվում է միայն հետևյալ բանաձևի ընդունմամբ. «Ներկա քաղաքական ընդհանուր պայմանները ոչ մի կերպ չեն կրնա փոխել արդեն իսկ միջազգայնորեն և պատմականորեն նվիրագործված Հայկական հարցի էությունը»³:

Արևմտահայ 1-ին համագումարը նախաձեռնած արևմտահայ գործիչները ամենայն հավանակությամբ նկատի են ունենում նաև 1917 թ. մարտի 7-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում կայացած հայկական քաղաքական կուսակցությունների և հոսանքների խորհրդակցության զգուշավոր դիրքորոշումը, որը կիսում է նաև Անդրանիկը: Խորհրդակցության 6 նիստերին մասնակցեցին Ազգային բյուրոյի, քաղաքական կուսակցությունների և հոսանքների տասնյակ ներկայացուցիչներ, նաև ճանաչված ազգային-քաղաքական գործիչներ և մտավորականներ⁴: Խորհրդակցության հիմնական նպատակը հեղափոխությունից հետո ստեղծված հասարակական-քաղաքական նոր պայմաններում հայության առջև ծառայած հիմնահարցերի շուրջ հայ քաղաքական կուսակցությունների և հոսանքների միասնական

¹ Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 347:

² Նույն տեղում:

³ ՀԱԱ, ֆ. Պ-32, ց. 1, գ. 12, թ. 160:

⁴ Տես ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 4, թթ. 1-52:

մոտեցումներ մշակելն էր: Մարտի 7-ի առաջին նիստում «Մշակի» խմբագիր Յ. Առաքելյանը ասում է, որ նկատի ունենալով տեղի ունեցած քաղաքական ու գինվորական հեղափոխությունը՝ ներկա հանգամանքներում՝ մենք պետք է բռնենք որոշակի դիրք, անպատրաստ չգտնվենք օրվա հարցերի հանդեպ, որ շոշափում են քաղաքացիների ու ազգերի շահերը¹:

Ելնելով հեղափոխության զարգացման պայմաններում նոր մարտահրավերների և դրանց հետ կապված վտանգների անկախատեսելիությունից՝ խորհրդակցության մասնակիցները անհրաժեշտ են համարում դրսևորել զգուշավոր մոտեցումներ արևմտահայ ազգային-քաղաքական խնդիրների առաջադրման և լուծման գործում: Խորհրդակցության մարտի 12-ի նիստում նշելով, որ թուրքահայերին դեռ որոշակի վտանգներ են սպառնում, Ա. Խատիսյանը առաջարկում է չշտապել թուրքահայ դատի համար համագումար հրավիրելու հարցում²: Իսկ մենչևիկ-ինտերնացիոնալիստ Ա. Երզնկյանը գտնում է, որ քանի դեռ տաճկահայ դատը իր լուծումը չի ստացել, դրա բարձրացումը այս պահին կարող է վտանգ ներկայացնել հենց կոմկասահայության խնդիրների համար³:

Խոսելով վտանգների մասին՝ հայ քաղաքական գործիչները, իհարկե, նկատի ունեին ոչ միայն թշնամաբար տրամադրված հարևաններին: Նրանք գտնում են, որ անիրատես պահանջները կարող են թշնամաբար տրամադրել նոր իշխանություններին հայերի նկատմամբ: «Թույլ ուժերով պահանջներ անել ժամանակավոր կառավարությունից, ի՞նչ օգուտ,- ասում է իր ելույթում Անդրանիկը,- խոշոր պահանջներ դնող ազգերը մոռանում են, որ պատերազմ է: Հեղափոխության տվածը չկորցնենք: Մի դանակ էլ չունենք ձեռքներս, սպասենք մինչև հաղթեն գերմանացոց: Կարող է հեղաշրջում լինել»⁴: Նույն մտահոգությունն է հնչում նաև հայ մեծ գրող Յ. Թումանյանի խոսքում. «Կերենսկին այստեղ [Թիֆլիս] եղած ժամանակ չէր ուզում լսել «Անկախ Հայաստանի» մասին: Դրությունը այնքան խախտու է, որ այդպիսի մի հայտարարություն վտանգավոր է: Որի՞ն է դուր գալու, ռուսի՞ն, տաճիկի՞ն, վրացու՞ն, նույնիսկ անգլիացո՞ւն: Գուցե հայի հանգստության համար»⁵:

Խորհրդակցության մարտի 7-ի նիստում որոշվում է «գաղթականական համաժողով հրավիրելու հարցը» առժամանակ հետաձգել, «մինչև կպարզվեն հանգամանքները»⁶: Մարտի 19-ին արդեն Հայոց Ազգային բյուրոն միաձայն ընդունում է տաճկահայության համագումար հրավիրելու և տաճկահայության համար որևէ կառավարական հայտարարություն անելու վաղաժամկետության մասին որոշում: Այդ մասին Ազգային բյուրոյի մարտի 20-ի հերթական նիստում հայտարարում է Ազգային բյուրոյի նախագահ Ա. Խատիսյանը⁷: Այդ որոշումներն առաջին հերթին բխում էին ինչպես Հայկական քաղաքական կուսակցությունների և հոսանքների խորհրդակցության, այնպես էլ Հայոց Ազգային բյուրոյի կողմից որդեգրած ընդհանուր սպասողական, զգուշավոր դիրքորոշումից: Ընդ որում, այդ դիրքորոշումը որդեգրվում է ոչ միայն արևմտահայության, այլև արևելահայության առջև ծառայած հիմնախնդիրների առաջադրման և դրանց իրականացմանը հետամուտ լինելու հարցերում:

Չնայած այդ որոշումներին՝ արևմտահայ ազգային-քաղաքական գործիչների մի մասը, այնուամենայնիվ, ձեռնամուխ է լինում արևմտահայ համագումարի հրավիրմանը: Դրանով իսկ նրանք ըստ էության ընդդիմանում են իրենց վերաբերող, բայց փաստացի հայ

¹ ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 4, թ. 1:

² Տես ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 111, թ. 101:

³ Տես նույն տեղում, թ. 79:

⁴ Նույն տեղում, թ. 102:

⁵ Նույն տեղում, թ. 113:

⁶ Նույն տեղում, թ. 1:

⁷ Տես ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 111, թ. 105:

ժողովրդի արևելահայ հատվածի հասարակական-քաղաքական կազմակերպությունների որոշմանը: «Ռուսահայերը մեզի համար բան մըն ալ պիտի չընեն, եկեք թրքահայ համագումար մը կազմակերպենք», ասում է Անդրանիկը¹: Ըստ ամենայնի, այս մտայնությունն է տիրում արևմտահայ ազգային-քաղաքական գործիչների մեծամասնության մեջ:

Արևմտահայ 1-ին համագումարի հանդիսավոր բացումը կատարվում է Երևանում 1917 թ. մայիսի 1-ին²: Համագումարի պատվավոր նախագահ է ընտրվում Անդրանիկը, համանախագահներ՝ Լ. Շանթը, Վ. Փափագյանը և Ա. Դարբինյանը³: Հակիրճ ելույթով և համերաշխության կոչով համագումարի բացումը կատարում է Անդրանիկը: «Մենք պիտի կրնանք մեր ցեղին բեկորները պահել ու պահպանել,- ասում է նա,- մեր օճախները վերականգնել և մեր ապագայի վրա հույս դնելու ատեն, երբ զիրար հասկանանք ու համերաշխինք»⁴: Այնուհետև մեծ ճառով հանդես է գալիս Արամը⁵:

Արևմտահայ 1-ին համագումարում ծավալված պայքարում ձևավորվում է երկու քաղաքական խմբավորում: Մեկի ղեկավարությունը ստանձնում է Անդրանիկը: Նրա շուրջ համախմբվում են համագումարում ներկայացված արևմտահայ բոլոր ոչ-դաշնակցական ուժերը: Միաժամանակ Անդրանիկին էին հարում արևմտահայ դաշնակցականների մի մասը, որոնց անվանում էին «Անդրանիկյան դաշնակցականներ»⁶: Արևմտահայ 1-ին համագումարում Անդրանիկի կողմից ղեկավարվող ուժերին հակադիր բլոկ էին կազմում դաշնակցականների մնացած մասը՝ Ա. Մանուկյանի ղեկավարությամբ⁷: Ակներև է, որ Անդրանիկի պատվավոր նախագահ ընտրվելը և համագումարի ոչ դաշնակցական քաղաքական խմբավորման լիդեր դառնալը պայմանավորված է եղել ազգային հերոսի և ազգային-քաղաքական գործչի հեղինակությամբ և արևմտահայ ազգային-քաղաքական խնդիրների շուրջ ազգային, հասարակական-քաղաքական բոլոր ուժերի համերաշխության ու համախմբման վերաբերյալ նրա դիրքորոշմամբ և այդ իրագործման ուղղությամբ ծավալած աշխատանքով:

Արևմտահայ հասարակական-քաղաքական ղեկավարները Արևմտահայ 1-ին համագումարում ինքնըստինքյան հակադրվում են հասարակական կյանքում դաշնակցության մենաշնորհային դիրքին: Ընդ որում, համագումարում այդ հակադրությունն ունեցել է որոշակի հատվածական երանգ: Դաշնակցության ղեկավար դիրքի դեմ պայքարը պատճառաբանվում է նաև այն հանգամանքով, որ դաշնակցական կենտրոնական մարմինը՝ Արևելյան բյուրոն, գտնվում է կովկասահայ դաշնակցության ղեկավարության ներքո: Փաստորեն, արևմտահայ ազգային-ազատագրական շարժման մեջ դաշնակցության մենաշնորհային դիրքը, ըստ համագումարի մասնակիցների մի մասի, նշանակում էր ոչ թե դաշնակցության, այլ կովկասահայ դաշնակցության, այսինքն ռուսահայերի գերիշխանությունը արևմտահայերի գործերում: Նպատակ ունենալով ձերբազատվել ռուսահայերի խնամակալությունից՝ համագումարում ներկայացված արևմտահայ ուժերը սուր պայքար էին մղում իր ղեկավար դիրքը վերահաստատելուն ուղղված դաշնակցության ձգտումի դեմ⁸:

Համաձայն Անդրանիկի հետ ձեռք բերված միջկուսակցական համաձայնության՝ համագումարում դրվում և քննարկվում են միայն արևմտահայ փախստականների ֆիզի-

¹ Ա. Չելեպյան, Ձորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 375:

² Տե՛ս Վ. Փափագյան, Իմ հուշերը, էջ 439:

³ Տե՛ս «Մշակ», 6 մայիսի 1917 թ.:

⁴ «Հայաստան», 7 մայիսի 1917 թ.:

⁵ Տե՛ս Վ. Փափագյան, Իմ հուշերը, էջ 439:

⁶ Տե՛ս Ա. Թերզիբաշյան, Նուպար, Փարիզ, 1939, էջ 151:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս Կ. Հայրապետյան, Հատվածականության դրսևորումները Արևմտահայ առաջին համագումարում, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, մաս Բ, 2013, էջ 88:

կական գոյության պահպանմանը, ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստան փախստականների վերադարձի կազմակերպմանը, հայրենիքի վերաբնակեցմանն ու վերաշինությանը վերաբերող հարցեր: Արևմտահայ 1-ին համագումարում չառաջադրելով Արևմտյան Հայաստանի հարցը, արևմտահայ ազգային-քաղաքական գործիչները փաստացի դրսևորում են զուսպ և շրջահայաց դիրքորոշում, ինչը հայ իրականության մեջ բավականին հազվադեպ երևույթ է: Համագումարը չանդրադարձավ նաև հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ցեղասպանության և դրա հետևանքով արևմտահայության համար ստեղծված աղետալի վիճակի պատճառներին: Այդ մասին է վկայում ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ «Մշակը»՝ հայտնելով, որ մոտ 200 000 փախստականների շահերը պաշտպանող արևմտահայ համագումարը անուշադրության մատնեց արևմտահայերի ներկա աղետալի վիճակի պատճառները¹: Մեծ եղեռնի և արևմտահայության աղետալի վիճակի պատճառներին չանդրադարձալը պայմանավորվում է, մեր կարծիքով, ոչ թե «արևմտահայ համագումարի անուշադրությամբ», այլ համագումարի աշխատանքները չվտանգելու, համերաշխության պահպանման նկատառումներով, որի հիմնական ջատագովը և երաշխավորը համագումարում Անդրանիկն էր:

Արևմտահայ 1-ին համագումարում ընդունված որոշումներով լուծվում է ամբողջ արևմտահայության բնական ձգտումները՝ ինքնահաստատվել որպես հայ ժողովրդի իրավահավասար մի հատված, հանդես գալ որպես առանձին, կուռ կազմակերպված հանրություն, ինքնուրույն տնօրինել հետագա ճակատագիրը՝ ձերբազատվելով միայն խնամքի կարիք ունեցող փախստականի կարգավիճակից, գաղթականի «վիրավորական կոչումից»²: Համագումարը, որպես արևմտահայ փախստականների ներկայացուցչական մարմին, ամրագրում է արևմտահայ փախստականների գործերում արևելահայերի և արևմտահայերի սերտ համագործակցության, նրանց իրավահավասարության սկզբունքները, ինչը հնարավորություն է ընձեռնում արևմտահայերին հետագայում անմիջականորեն մասնակցելու փախստականների օգնության և ներքին կյանքի կազմակերպմանը, այդ նպատակով ծախսվող ֆինանսական միջոցների վերահսկմանը: Այսպիսով, լուծվում է արևմտահայության առջև ծառայած հիմնական խնդիրներից մեկը. «Թրքահայ գաղթականությունը դուրս բերել ռուսահայ կազմակերպությանց խնամակալութենեն և անոր տալ ուրույն դիմագիծ և քաղաքական իդեալ»³:

Այդ որոշումների իրականացումը պետք է ապահովեր համագումարի կողմից ընտրված արևմտահայ ներկայացուցչական կենտրոնական մարմինը՝ Արևմտահայ խորհուրդը, որի ձևավորման շուրջ է ծավալվում հիմնական պայքարը: Եվ դա բնական էր, քանի որ համագումարում հռչակելով այդ մարմնի զուտ փախստականների օգնության գործերով զբաղվելու նպատակը՝ բոլոր մասնակիցների համար հասկանալի էր, որ իրականում այն պետք դառնար մի մարմին, առանց որի չէր կարող իրականացվել արևմտահայ փախստականների հետ կապված որևիցե գործ⁴: Այդ իրողությունը գիտակցում են արևմտահայ ինչպես դաշնակցական, այնպես էլ ոչ դաշնակցական կողմերը: Անդրանիկը և իր կողմնակիցները ձգտում էին հասնել այն բանին, որ դաշնակցականները Արևմտահայ խորհուրդում մեծամասնություն չկազմեն: Նրանք անընդունելի էին համարում Արևմտահայ խորհուրդ անվանել մի մարմին, որը հրահանգներ պիտի ստանար, այսինքն ղեկավարվեր

¹ Տե՛ս «Մշակ», 21 մայիսի 1917 թ.:

² Տե՛ս Ա. Չելեայան, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, էջ 377:

³ Տե՛ս Ա. Թերզիբաշյան, Նուպար, էջ 152:

⁴ Տե՛ս Կ. Սասունի, Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 148:

արևելահայերի մենաշնորհ դարձած դաշնակցական բյուրոյի կողմից¹: Դաշնակցականները, իրենց հերթին, ինչպես նշում է Կ. Սասունին, գտնում էին, որ Հայ հեղափոխական դաշնակցությունը թուրքահայաստանի մեջ գործող միակ կուսակցությունն է: Հակառակ դրան, համագումարին մասնակցող մյուս քաղաքական ուժերը ցանկանում էին դաշնակցականներին հավասար տեղ գրավել Արևմտահայ խորհրդում²:

Արևմտահայ խորհրդի ընտրության կարգի և կազմի շուրջ երկու խմբավորումների միջև ծավալվում է բավական սուր պայքար: Ընդ որում, այդ քաղաքական պայքարի շրջանակներում Անդրանիկը ցուցաբերում է փորձառու և հետևողական քաղաքական գործչին բնորոշ հմտություններ՝ օգտագործելով մի քանի մարտավարական ձևեր և առանձնահատուկ միջոցներ:

Անդրանիկի կողմից կիրառվող միջոցներից մեկը եղել է այն, որ ակնկալելով համագումարում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի համախմբումը ընդդեմ դաշնակցության մենաշնորհային դիրքի և օգտագործելով իր հեղինակությունն ու ազդեցությունը, նա հնարավորություն էր տալիս համագումարի բոլոր մասնակիցներին ազատ ներկայացնել իրենց տեսակետները ու մոտեցումները: Թե ինչպես է Անդրանիկը համագումարում ապահովում ազատ արտահայտվելու ժողովրդավարական սկզբունքը, երևում է Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար Գ. Հայկունու հուշերից: «Արամ փաշայի իմ հասցեին ուղղված սպառնալիքի դեմ բորբոքված,- գրում է Գ. Հայկունին,- ոտքի կանգնեց համագումարի պատվավոր նախագահ Անդրանիկը և ներշնչեց դաշնակցականներին, որ ոչ ոք չհամարձակվի խանգարել Հայկունու ճառը և կամ սպառնալ նրան»³: Ըստ Գ. Սուրենյանի, Ա. Մանուկյանը, ինքնակոչ խցկվելով համագումար, փորձում է թելադրել իր կամքը, «ճգնեցավ համագումարե ընտրվելիք թրքահայ ղեկավար մարմնին մեջ խոթել դաշնակցականներ...»⁴: Անկասկած համագումարի մասնակիցները տեղյակ են եղել տարբեր ժամանակներում և որոշ իրավիճակներում Անդրանիկի դրսևորած այն անհանդուրժողական վերաբերմունքի մասին, որ նա ցուցաբերել է բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հակադրվում էին իրեն: «Իսկ ո՛վ էր այն բախտավորը, որ Անդրանիկի բռունցքի կամ լեզվի համը չէր ճաշակել: Անդրանիկը ծեծել էր Գասպար Իփեկյանին, Աշխարհբեկ Քալանթարյանին, Անաստաս Միկոյանին, Մույնիսկ Ռոստոմի, բժ. Ջավրիյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի վրա փորձել էր ձեռք բարձրացնել», - գրում է իր հուշերում Ս. Վրացյանը⁵:

Հերթական բախումներից մեկից հետո Անդրանիկը լքում է համագումարի դահլիճը և մեկնում էջմիածին: Համագումարից Անդրանիկի հեռանալուց հետո նրա կողմնակիցներից մի քանիսը հայտարարում են իրենց ձեռնպահ լինելու մասին⁶: Նրանք հրաժարվում են որևէ պատասխանատվություն կրել Անդրանիկի հեռանալուց հետո համագումարի ընդունած որոշումների համար: Քաղաքական պայքարում Անդրանիկը ձեռնարկում է բավական հաշվենկատ քայլ, ինչից հետո համագումարի աշխատանքը ժամանակավորապես դադարեցվում է: Հասկանալի է, որ առանց Անդրանիկի համագումարի որոշումները արևմտահայերի մի զգալի մասի կողմից օրինական չէր համարվի, իսկ նորընտիր մարմինն էլ հայ հասարակական-քաղաքական կյանքում չէր ունենա այն ազդեցությունը, որ ակնկալում էին արևմտահայ գործիչները: Ըստ էության համագումարի հետագա աշխատանքը վտանգվում է:

¹ Տե՛ս Տեղակալ Մ. Ավետյան, Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) Հուշամատյան և Ձոր. Անդրանիկի վերլուծական հայեցողությամբ և վավերական տվյալներով, Փարիզ, 1954, էջ 176:

² Տե՛ս Կ. Սասունի, Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 148:

³ ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 4, գ. 24, թ. 17:

⁴ Գ. Սուրենյան, Ինչու զօր. Անդրանիկ հեռացավ Հ. Յ. Դաշնակցությունեն, Կ. Պոլիս, 1920, էջ 8:

⁵ Խ. Վրացյան, Կեանքի ուղիներով, Գ հատոր, Պեյրուս, 1963, էջ 106:

⁶ Տե՛ս «Մշակ», 21 մայիսի 1917 թ.:

Էջմիածնում Անդրանիկին ընդունում է Վեհափառ Կաթողիկոսը՝ Գևորգ Ե-ն: Հասկանալի է, որ նման ընդունելության հնարավորություն կարող էր ունենար միայն արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, ժողովրդի կողմից հարգված և սիրված ազգային հերոս Անդրանիկը: Համագումարում դաշնակցականների վարած քաղաքականության կապակցությամբ Անդրանիկը կաթողիկոսին հայտնում է իր բուռն վրդովմունքը և խնդրում թույլ չտալ, որ համագումարի կողմից ընտրվող մարմնում դաշնակցականները կազմեն մեծամասնություն¹: Քաղաքական պայքարի ևս մեկ առանձնահատուկ քայլ, որը ձեռնարկել է Անդրանիկը: Միայն Ամենայն Հայոց կաթողիկոսի հորդորների շնորհիվ Անդրանիկը վերադառնում է Երևան և համագումարի աշխատանքը վերսկսվում է²:

Էջմիածնից նա մի նամակ է հղում համագումարին՝ հայտնելով դաշնակցությունից իր հեռանալու մասին. «Ես այլևս չեմ պատկանում Հ. Յ. Դ. և դուրս եմ գալիս իսպառ այդ կուսակցությունից»³: Համագումարի օրերին Անդրանիկի արած այս հայտարարությունը հետագայում դաշնակցությունը բացատրում էր նրա անձնական խառնվածքի առանձնահատկություններով: Մեր կարծիքով՝ պատճառներն ավելի խորն են: Հիմքում ընկած է եղել քաղաքական պայքարի տրամաբանությունը: Արևմտահայության ազգային-քաղաքական նպատակների ու խնդիրների, դրանց իրագործման ուղիների, ինչպես նաև այդ գործընթացներում ղեկավար ուժի մասին դաշնակցության և Անդրանիկի տարբեր մոտեցումները հանգեցրել են այդ քայլին: Միաժամանակ, Անդրանիկը համագումարի մասնակիցներին ցուցադրում է, որ եթե իր նման ազգային գործիչը կարող է՝ չհամաձայնվելով դաշնակցության կողմից համագումարում դրսևորած գործելակերպին, նման քայլի դիմել, ապա այդ կուսակցության մյուս անդամները կարող են գոնե քվեարկել ոչ թե ըստ կուսակցական ղեկավարների ցուցումների, այլ իրենց համոզմունքների համապատասխան:

Համագումարում Անդրանիկը և իր կողմնակիցները լայնորեն օգտագործեցին նաև հատվածականության երևույթը: Հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների միջև հատվածականությունը և դրա դրսևորումները առավել ցցուն ի հայտ եկան 1917 թ. Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունից հետո⁴: Օգտագործելով Արևմտահայ 1-ին համագումարում վառ արտահայտված հատվածականության երևույթը՝ Անդրանիկի կողմնակիցներն Արևմտահայ խորհրդի կազմում չեն ընտրում ծագումով արևելահայ, ճանաչված ազգային-քաղաքական, պետական գործիչ Ա. Մանուկյանին: «Արամին չուզեցան ընտրել,- գրում է Վ. Փափազյանը,- որովհետև ծագումով թուրքահայ չէր... Մարդ մը, որ իր գիտակցական տարիքեն նվիրվեցավ թուրքահայ դատին և հեղափոխական թափով ու մոլեռանդորեն՝ նետվեցավ անոր ազատագրական գործին, կրեց անհուն հոգեկան և ֆիզիկական տառապանք այդ ժողովուրդին համար, բայց ... ծագումով իրենցմե չը համարվեցավ - անհեթեթ և անարդար էր»⁵: Արևմտահայ խորհրդի կազմում Ա. Մանուկյանի չընտրվելու հիմնական պատճառ էր այն հանգամանքը, որ համագումարում նա ղեկավարում էր դաշնակցական բլոկը՝ փաստորեն հանդես գալով որպես արևելահայերի դաշնակցական քաղաքականությունը մարմնավորող քաղաքական գործիչ:

Երկու օրվա թեժ քննարկումներից հետո համագումարը որոշում է Արևմտահայ խորհուրդ ընտրել Արևմտյան Հայաստանը ներկայացնող պատգամավորներից՝ նահանգական ներկայացուցչական սկզբունքով: Թեժ պայքարի արդյունքում Արևմտահայ

¹ Տեղակալ Մ. Ավետյան, Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) Հուշամատյան և Ջոր.

Անդրանիկի վերլուծական հայեցողությամբ և վավերական տվյալներով, էջ 176:

² Տե՛ս Ա. Չելեպյան, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 377:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ «Վերածնունդ», 14 հուլիսի 1917 թ., էջ 59:

⁵ Վ. Փափազյան, Իմ հուշերը, էջ 441:

համագումարն ընտրում է 15 անդամից և 10 փոխանորդից բաղկացած Արևմտահայ խորհուրդ¹: 1917 թ. օգոստոսի սկզբին Արևմտահայ խորհուրդն իր կազմից ընտրում է 5 հոգուց բաղկացած գործադիր մարմին²: Արևմտահայ 1-ին համագումարում Անդրանիկի քաղաքական գործունեության արդյունքները բավական խոսուն են: Արևմտահայ խորհրդի անհատական կազմի մասին տվյալների վերլուծությունը միանշանակորեն իրավունք է տալիս պնդել, որ Անդրանիկի ղեկավարած ուժերը կարողանում են հասնել այն բանին, որ դաշնակցականները Արևմտահայ խորհրդում չունեցան վճռորոշ մեծամասնություն, իսկ Արևմտահայ բյուրոյում՝ արդեն իսկ մեծամասնություն չէին:

Այսպիսով, Արևմտահայ 1-ին համագումարում արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, հայ ժողովրդի կողմից հարգված և սիրված ազգային հերոս Անդրանիկի հասարակական-քաղաքական գործունեության վերլուծությունը թույլ է տալիս մեզ միանշանակ արձանագրելու, որ նա եղել է ոչ միայն բազմափորձ ռազմաքաղաքական, այլև հմուտ և հետևողական ազգային-քաղաքական գործիչ և առաջնորդ: Արևմտահայ 1-ին համագումարում ծավալված քաղաքական պայքարում Անդրանիկը ըստ արժանվույն դրսևորվում է որպես քաղաքական գործի հմուտ կազմակերպիչ ու ղեկավար՝ հանդես բերելով քաղաքական առաջնորդի փայլուն հատկություններ և ունակություններ:

Карен Аўрапетян, Андраник на Первом съезде западных армян,- Видный деятель западноармянского национально-освободительного движения, прославленный национальный герой Андраник в 1916 году включается в армянскую национальную общественно-политическую жизнь Закавказья. Благодаря своим лидерским качествам Андраник в течение одного года становится известным национально-политическим деятелем, руководителем сформировавшегося вокруг газеты «Аўастан» общественно-политического течения. В развернувшейся на Первом съезде западных армян политической борьбе Андраник проявляет блестящие качества и способности политического лидера, умелого организатора и руководителя политических процессов.

Karen Hayrapetyan, Andranik in the First conference of Western Armenians-In 1916 prominent figure of Western Armenians' national-liberation movement Andranik was involved in the Armenian national-social and political life in South Caucasus. Within a year Andranik with his skills of leader became known as a national-political figure and the head of a Western Armenian social-political stream, central body of which was the newspaper "Hayastan". During the political combats in the First conference of Western Armenians Andranik positions himself as an organizer and a chief of a political process showing skills of a brilliant political leader.

Կարեն Հայրապետյան - պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դասախոս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող:

¹ Տե՛ս «Հորիզոն», 8 հունիսի 1917 թ., N 119:

² Տե՛ս «Մշակ», 25 օգոստոսի 1917 թ., N 179: